



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

11 փետրվարի 2019թ. թիվ 137

**Ռ. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ  
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը՝

**Կ ա ր զ ա դ ր ու մ եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ Ռուզաննա Պողոսյանին ա/թ փետրվարի 11-ից 13-ը ներառյալ թույլատրել մասնակցելու ՀՀ ԱՆ և Առողջապահության համաշխարհային կազմակերպության հովանու ներքո Երևանում իրականացվելիք «Դեռահասների առողջություն և զարգացում» ուսուցողական դասընթացին:

2. Գործուղման հետ կապված ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

 Invalid signature

**X** 

**ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2019թ. փետրվարի 11  
ք.Վանաձոր